08.02.2022թ -ին

կնքված N ԴՏՊ-1160/11012/Ե-5 պայմանագրի

**Ծրագրի եռամսյակային հաշվետվություն՝ 1-ին եռամսյակ 2022թ.**

**Միջոցառման անվանումը՝** «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում» ծրագիր

**Համառոտ բովանդակությունը՝** Ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումը՝ սոցիալ-վերականգնողական ծառայությունների տրամադրման և սոցիալ-հոգեբանական աջակցության միջոցով, ձևավորել և զարգացնել շահառուների ինքնասպասարկման, կենցաղավարման, հաղորդակցման հմտությունները, տրամադրել շահառուի կարիքին համարժեք որակյալ սոցիալ-հոգեբանական, սոցիալ-վերականգնողական աջակցություն, մասնագիտական կողմնորոշման և այլ ծառայություններ:

**Հաշվետու ժամանակաշրջան՝** փետրվար-մարտ

| | Իրականացված գործողություններ | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **Գործառույթների նկարագիր (1)** | **Ակնկալվող արդյունքները (2)** | **Գնահատման չափանիշները և հիմնավորող փաստաթղթեր (3)*** | **Փաստացի մատուցած ծառայություններ (4)** | **Մեկնաբանություն (5)** |
| | «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական աջակցություն ցերեկային կենտրոնում» ծրագրի շրջանակներում 25 հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվել են հետևյալ բազմամասնագիտական թիմի կողմից մատուցվող ծառայություններ շաբաթական 16-18 ժամ տևողությամբ.<br>1.Հատուկ մանկավարժի անհատական և խմբային պարապմունքներն իրականացվում են շաբաթական 5 օր: Փետրվար և | Շահառուների մոտ բավարար մակարդակով զարգացել | 1.Մասնագետի և խմբավարի աշխատանքային գրաֆիկ<br>2.Շահառուների զբաղվածության բլանկ | Հատուկ մանկավարժի | Բացի ցերեկային խնամքի կենտրոնի հիմնական մասնագիտական աշխատանքից, իրականացվել և նաև հետևյալ միջոցառումները.<br>1.Շահառուների ծնողներին կենտրոնի մասնագետների կողմից տրամադրվել է խորհրդատվություն:<br>2.Շահառուները, ովքեր ծա- |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | մարտ ամիսների ընթացքում իրականացված անհատական և խմբային աշխատանքների նպատակներն են եղել.<br>ա/զարգացնել շահառուների ճանաչողական ոլորտը,<br>բ/տարածական կողմնորոշումը և ժամանակի ընկալումը,<br>գ/ամրապնդել մտածողությունը, ուշադրությունը և հիշողությունը, | տարածական կողմնորոշման և ժամանակի ընկալման հմտությունները,ամրապնդվել ճանաչողական ոլորտը: | | | ռայություններից օգտվում են առավոտյան ժամերին մասնակցում են մարմնամարզություն-ֆիզկուլտուրային ամեն օր ժ.10:20-10:30: |
| | 2. Հատուկ հոգեբանի պարապմունքներն իրականացվում են շաբաթական 5 օր:<br>Եռամսյակային աշխատանքի նպատակներն են եղել.<br>ա/հոգեկան գործընթացների (մտածողություն, հիշողություն, ուշադրության կենտրոնացում և այլն) զարգացում<br>բ/հուզակամային ոլորտի խնդիրների հաղթահարում<br>դ/պատկերների համադրման կարողությունների ամրապնդում | Շահառուների մոտ հնարավորինս զարգացել են շփման և հաղորդակցման հմտությունները, իսկ հուզակամային ոլորտի խնդիրների հաղթահարման ուղղությամբ անհրաժեշտ է շարունակական աշխատանքներ իրականացնել: | | Հատուկ հոգեբանի | 3.Համագործակցության արդյունքում ցերեկային խնամքի կենտրոնի շահառուների հետ Խարբերդի մասնագիտացված մանկատուն են այցելել նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում» ծրագրի շահառուները՝ մասնակցելու խեցեգործության դասընթացի: Նախաձեռնությունը կկրի շարունակական բնույթ՝ նպաստելով շահառուների աշխատանքային կարողությունների, հնարավորությունների և ստեղծագործական մտքի զարգացմանը: |
| | 3. Լոգոպեդի անհատական և խմբային պարապմուքներն իրականցվում են շաբաթական 3 օր:<br>Եռամսյակային աշխատանքի նպատակներն են.<br>ա/խոսքի և բառապաշարի ակտիվացում,<br>բ/խոսքի տեմպի և ռիթմի կարգավորում,<br>գ/շնչառության երակարացմանն ուղղված վարժություններ,<br>ե/պատկերների համադրման և տարբե- | Բավարար մակարդակով բարելավվել է շահառուների բառապաշարը, կարգավորվել խոսքի տեմպը և ռիթմը: | | Լոգոպեդի | 4.«Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում» ծրագրի շահառու- |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ռակման կարողությունների զարգացում<br><br>4. Սոցիալական աշխատանքի պարապմունքներն իրականացվում են շաբաթական 4 օր:<br>Իրականացվել են խմբային և անհատական պարապմունքներ՝ ուղղված<br>ա/սոցիալիզացիայի զարգացմանը՝ մասնավորապես հասցեների յուրացմանը,<br>բ/ընտանեկան դերերի յուրացմանը, ընտանիքի անդամների տարբերակմանը,<br>գ/սոցիալական հմտությունների զարգացմանը<br>դ/երթևեկության կանոնների վերաբերյալ պատկերացումների ամրապնդմանը:<br>ե/արտակարգ իրավիճակներում կողմնորոշման մեխանիզմների ուսուցմանը: | Շահառուների մոտ զգալիորեն զարգացել է սոցիալիզացիան, ճանաչողական ոլորտը, ընտանեկան դերերի տարբերակման ու ճանաչողության ուղղությամբ անհրաժեշտ է շարունակել աշխատանքները: Սոցիալական հմտությունների յուրացման ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել շարունակական աշխատանքներ: | | Սոցիալական աշխատողի | ները մասնակցել են նաև.<br><br>• Հայաստանի Աստվածաշնչյան ընկերության հետ համատեղ "Children in Need" ծրագրի շրջանակում ՀԱԸ-ի աշխատակիցները հաճախող շահառուների համար շաբաթը մեկ օր իրականացրել են արտթե-ռապիայի և Աստվածա-շնչի ընթերցանության դասեր, որը կկրի շարունակական բնույթ:<br>• Շաբաթական մեկ օր առանձնացված խմբերի ֆիլմերի դիտում համապատասխան շահառուների խմբային առանձնահատկությանը, ընտրվում են ֆիլմեր կամ հայկական մուլտֆիլմեր, որոնց ավարտից հետո խմբի դաստիարակը և հոգե-բանը անցկացնում են հարցապատասխան շահառուների հետ՝ հասկանալու, թե՞ որքանով են ընկալել ֆիլմը:<br>• Կենտրոնում նշվում են շահառուների ծննդյան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տոները՝ նրանց օրը դարձ-նելով ուրախ և հետաքրքր-քիր:<br>• Սպորտային կարողությունների ամրապնդման նպատակով դահլիճում և կենտրոնի բակում կազմակերպվել են տարբեր շարժախաղեր:<br>• Կենտրոնի շահառուները մասնակցել են այգու գար-նանային բարեկարգման աշխատանքներին:<br>5.Կենտրոնի ատամնաբուժարանը գործում է շաբաթական 3 օր: Ատամնաբույժները պարբերաբար անցկացրել և շարունակում են անցկացնել զրույցներ շահառուների հետ բերանի խոռոչի հիգիենայի վերաբերյալ: |
| | Ամենօրյա մատուցվող ծառայությունների մեջ կարևոր դերակատարում ունեն գործող խմբակները, որոնք են.<br>1.Ձեռագործության տարբեր ոճեր խմբակի աշխատանքներն իրականացվում են շաբաթական 3 օր:<br>Եռամսյակային նպատակներն են՝<br>ա/կարատեսակների ուսուցում<br>բ/հելունագործության հմտությունների ամրապնդում, | Շահառուները բավարար մակարդակով տիրապետում են կարատեսակներին, հելունագործության, շյուղագործության հմտություններին, իսկ կանվայի լիցքավորման հմտությունների ուղղությամբ շահառուն- | | Ձեռագործության տարբեր ոճեր | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | գ/կանվայի լիցքակարման հմտությունների ամրապնդում: | րի մի մասի հետ պետք է իրականացնել շարունակական աշխատանքներ: | | | |
| | 2.Մաքրամե և ապլիկացիա խմբակի պարապմունքներն իրականացվում են շաբաթական 2 օր:<br>Աշխատանքի նպատակներն են.<br>ա/թելերի մանր կտրատում<br>բ/պատկերի եզրագծերի տարանջատում<br>գ/գույների համադրում,<br>դ/կտրտած թելերով ապլիկացիաների պատրաստում: | Հաշմանդամություն ունեցող երիտասարդները մասնագետի օգնությամբ համադրում են գույները, տարանջատում են եզրագծերը և կտրատում թելերը, մաքրամեի թելերով պատրաստում են աշխատանքներ, բացի այդ մանր թելերով նկարազարդում են ապլիկացիաներ: | | Մաքրամե ապլիկացիա | |
| | 3.Նկարչության խմբակի աշխատանքներն իրականացվում են շաբաթական 5 օր: Իրականացված աշխատանքները նպատակ են ունեցել զարգացնել.<br>ա/գունաճանաչողությունը,<br>բ/ջրաներկով աշխատելու կարողությունները,<br>գ/գույների համադրման հմտությունները,<br>դ/ազատ թեմայի շրջանակներում ինքնուրույն նկարելու կարողությունները,<br>ե/շահառուների ստեղծագործական միտքը,<br>զ/փայտի վրա աշխատելու կարողությունների զարգացում,<br>է/խեցիների, լամպերի գունազարդման հմտությունների զարգացում և ամրա- | Շահառուները շարունակական աշխատանքների արդյունքում բավարար մակարդակով տիրապետում են ջրաներկով աշխատանքի տեխնիկային: Խմբավարի օգնությամբ համադրում են գույները, տիրապետում գունազարդման տեխնիկային՝ զարգացելով շահառուների ստեղծագործական միտքը: Բավականին զարգա- | | Նկարչություն | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | պնդում,<br>ը/կտավի վրա աշխատելու տեխնիկայի ուսուցում: | ցել և ամրապնդվել են փայտի վրա աշխատելու նկարազարդելու կարողությունները, խեցիների նկարազարդման հմտությունները: | | | |
| | 4.Դիզայնի պարապմունքներն իրականացվում են շաբաթական 5-օր:<br>Իրականացված պարապմունքներն ուղղված են եղել.<br>ա/ լեզալների տարբերակմանը,<br>բ/լեզալների մկրատով կտրտմանն ու ձևավորմանը,<br>բ/զարդարանքների համադրմանն ու ձևավորմանը,<br>գ/բացիկների, մոմերի և ամանորյա այլ դեկորների պատրաստում,<br>դ/առանձին դետալների սոսնձմանը: | Հաշմանդամություն ունեցող անձինք, խմբավարի օգնությամբ կարողանում են տարբերակել լեզալները, ինչպես նաև զարդարանքներով ձևավորել աշխատանքը, սոսնձել առանձին դետալներ: | | Գեղագիտական ձևավորում/դիզայն/ | |
| | 5.Կավագործության աշխատանքներն իրականացվում են շաբաթական 5 օր:<br>Եռամսյակի ընթացքում իրականացված աշխատանքները ուղղված են եղել.<br>ա/զարդատուփերի պատրաստմանը<br>բ/վզնոցների և մագնիսների պատրաստմանը<br>գ/հարթաքանդակների պատրաստմանը<br>դ/աղամանների պատրաստմանը: | Շահառուները պատրաստում են տարբեր տեսակի աշխատանքներ՝ բավարար մակարդակով յուրացնելով կավի տեսակները և զարգացնելով աշխատանքային կարողություններն ու հմտությունները: | | Կավագործություն | |
| | 6.Պար-ռիթմիկայի աշխատանքները կազմակերպվում են շաբաթական 3 օր:<br>Աշխատանքի նպատակներն են. | Հաշմանդամություն ունեցող անձինք հաջորդական հստակ | | Պար և ռիթմիկա | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ա/հայկական ժողովրդական պարերի ամրապնդում և նոր պարերի ուսուցանում<br>բ/ռիթմին համահունչ շարժումների հստակ յուրացում<br>գ/հայկական պարաքայլերի ուսուցանում | քայլերով պարում են հայկական ժողովրդական պարերը, սովորում նոր պարային շարժումներ: | | | |

Ազդեցությունը՝

1.Հաշմանդամություն ունեցող շահառուի համար ապահովված են բարենպաստ պայմաններ և միջավայր սոցիալ-հոգեբանական աջակցություն ստանալու և հագեցած պարապմունքներ ունենալու համար:

2. Կենտրոնում շահառուն օգտվում է բազմամասնագիտական թիմի ծառայություններից, որոնք հնարավորություն են տալիս զարգացնելու շահառուների կենսական անհրաժեշտության հմտությունները՝ հաղորդակցման կարողություն, ինքնուրույնություն, սոցիալական հմտություններ:

3. Գործող խմբակներում զարգացնում են իրենց աշխատանքային կարողություններն ու հմտությունները, իսկ պարի միջոցով վեր են հանվում շահառուների նախասիրությունները արվեստի բնագավառում: Նշված կարողությունների ձևավորման արդյունքում հաշմանդամություն ունեցող երիտասարդը կկարողանա ինտեգրվել հասարական կյանք՝ հավասար պայմաններում հանդես գալով աշխատաշուկայում:

4. Շահառուների ձեռքի աշխատանքների ցուցադրությունը տարբեր ցուցահանդեսներում հնարավորություն կտա հանրությանը ծանոթանալ նրանց աշխատանքային կարողություններին և հմտություններին:

5. Ծնողների հետ համագործակցությունը հնարավորություն կտա շահառուին ստանալ կարիքին համապատասխան աջակցություն:

6.Կենտրոնի գործունեության վերաբերյալ համացանցում և լրատվամիջոցներով հրապարակումների արդյունքում կբարձրանա հանրության իրազեկման մակարդակը հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային կարողությունների և հնարավորությունների մասին:

Նախագահ՝ Ա.Աբրահամյան

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
CENTER OF DISABLED PEOPLE'S PUBLIC ORGANIZATIONS
ЦЕНТР ОБЩЕСТВЕННЫХ ОРГАНИЗАЦИЙ ИНВАЛИДОВ
02210597
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ОБЩЕСТВЕННАЯ ОРГАНИЗАЦИЯ
PUBLIC ORGANIZATION
L-05